

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ձինաստանը չէ պէտք է բաժանվի.—Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կառավարչական հաղոր-
դագրութիւն. Մամուլ. Նամակ Ալեքսանդրօպօ-
լից. Նամակ Ալեքսանդրօպօլից. Նամակ Խմբա-
գրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Պատճառը ուրիշ է.

ՉԻՆԱՍՏԱՆԸ ԶԸ ՊԵՏԻ Ե ԲԱԺԱՆՎԻ

Ձինաստանի վերաբերութեամբ հրա-
տարարված է պաշտօնական հաղորդագրու-
թիւն, որ մեր ընթերցողները կը կար-
դան ներկայ համարում: Այդ հաղորդա-
գրութիւնը հանդէս է բերում երկու հիմ-
նական սկզբունք չինական հարցը լուծելու
համար, այն է, չը խախտել Ձինաստանի
ամբողջութիւնը և պահպանել համաձայ-
նութիւն պետութիւնների մէջ:

Որոշելով չը խախտել Ձինաստանի ամ-
բողջութիւնը՝ պետութիւնները կը թե-
թեւացնեն Ձինաստանի հետ բանակցու-
թիւններ վարելու և հաշտութիւն կա-
յացնելու գործը: Ձինական ժողովուրդը,
որ մեծ կասկածով և երկիւղով էր նայում,
թէ ինչ պէտք է արտայայտի եւրոպական
պետութիւնների միացած կամքը, այժմ
կարող է հանգստացնել իր վրդոված
հայրենասիրական զգացմունքը, որ խորա-
պէս վիրաւորված կը լինէր, եթէ որ և է
վտանգ սպառնար Ձինաստանի սահմաննե-
րին և քաղաքական ամբողջութեան:

Ձինաստանի բաժանման հարցը շատ
հեշտութեամբ կը դառնար և պետու-
թիւնների միմեանցից բաժանման հարց,
իսկ այդ բանից խուսափում են բոլոր պե-
տութիւնները, վախենալով նրա աղետա-
բեր հետեւանքներից: Պայմանաւորվելով
պահպանել Ձինաստանի ամբողջութիւնը,
պետութիւնները մնում են հաւատարմ ի-
րանց նախկին այն խոստմանը, թէ նրանք
պատերազմ չեն մղում Ձինաստանի դէմ,
այլ աշխատում են վերականգնել խախտ-
ված կարգը և օրինականութիւնը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՃԱՐՈՒԹԻՒՆ

«Մշակի» № 80-ում պ. Դաւթեան աշխա-
տում է պարզել մեր ինտելիգենցիայի Բազ-
ում կենտրոնանալու պատճառը: Նա համա-
րում է այդ երեւոյթը բնական, չը լինի հար-
կադրող շարժառիթներից, կապիտալիզմի զար-
գացման ճիւղերէն: Երկրորդը, ի հարկէ ա-
մեն մի երեւոյթ ունի իր հարկադրող շարժա-
ռիթները, բայց ներկայ ինքուրում, մեր կար-
ծիքով, սխալված կը լինեն, եթէ այդ շար-
ժառիթները որոնենք արդիւնաբերութեանը
յատուկ օրէնքների մէջ: Կապիտալիզմը առա-
ջանք, ինչպէս հարկն է, դեռ մուտք չէ
գործել մեր երկրի: Մեր ազգաբնակչութեան
միայն մի չնչին մասն է, որ ծառայում
է կապիտալին, և նոյն իսկ այդ չնչին տոկոսն
էլ կապիտալիստի քահանայութիւնը չէ կախված,
ինչպէս պ. յօդուածագիրն է ասում: Նոյն իսկ
այդ չնչին տոկոսը բանտարկւած դասակարգ չէ
ներկայացնում: Մեր բանտարկներից ամեն մէկը,
ինչպէս յայտնի է, մի և նոյն ժամանակ և
սեփականատէր է (գիւղում):

Եթէ կապիտալիզմին յատուկ օրէնքները դեռ
են իրանց ամբողջ ոյժով չեն ներգործել բուն
ժողովրդի վրա, մենք չենք հասկանում, թէ
ինչու կապիտալի ճանկերը այդպէս շուտ պէտք
է հուպ տան մեր ինտելիգենցիային:

Մեզ թւում է, թէ մենք ամենայն իրաւուն-
քով կարող ենք մի կողմ դնել կապիտալիզմը
և նրա ճիւղերէն օրէնքները և երեւոյթի
պատճառները միտուն ուրիշ տեղ:

Սակայն եւրոպան ունի իր առաջ եր-
կու դժուար լուծելու հարցեր: Նրանցից
առաջինն է՝ ապահովել իր շահերը ապա-
գայ ժամանակների համար և երկրորդ-
ստանալ բաւարարութիւն այս վերջին ա-
մաններում իր արած ծախսերի համար:
Եթէ չինական կառավարութիւնը անկեղծ
կերպով չը ցանկանայ շուտով հաշտութիւն
կայացնել, գործերը կարող են խճճվել և
երկար ժամանակով ձգձգվել, խելով եւրո-
պացիներից մարդկային գոհներ և ահաբե-
րածութիւն: Իսկ քանի այդ գոհները և ծախ-
սերը կը մեծանան, այնքան կը բարդվեն
խնդիրները, այնքան կը մեծանան եւրո-
պայի պահանջները տուգանքի և ապահո-
վութեան վերաբերութեամբ:

Պաշտօնական հաղորդագրութիւնը ան-
շուշտ սթափեցնող ազդեցութիւն կը գոր-
ծէ քաղաքական մամուլի վրա, որի ներ-
կայացուցիչներից շատերը սկսել էին լուրջ
կերպով խօսել Ձինաստանի բաժանման մա-
սին: Սյուպէս կարող է թւալ, թէ այդ բա-
ժանումը շատ հեշտ իրադրութիւն մի ծրա-
դիր է: Ինչպէս դա կը լինէր մի մեծ քա-
ղաքական սխալ, որի տուր արձագանք-
ները երկար ժամանակով կը խանգարէին
եւրոպայի հանգստութիւնը: Չարմանալի է,
որ Ձինաստանի բաժանման մտքին համա-
կրութեամբ էին վերաբերվում մամուլի
անպիսի ներկայացուցիչներ, որոնք տա-
րիների ընդթացումը դէմ էին նուաճումնե-
րի ընդարձակման գաղափարին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ
(Հեռագրով)

Վերջին ժամանակ անցքերը Պէկինի պատե-
րազմական բեմի վրա այն աստիճան անակնկալ
արագ ընթացք ստացան, որ դանակից զօրքե-
րի համեմատաբար աննշան զօրաբաժինն, որի
նպատակն էր ազատել պաշարված դրոշմը
նից օտարերկրացի զենուորներին և օտարա-
հպատակներին, աշողվեց ոչ միայն հասնել այդ
սկզբնական գլխաւոր նպատակին, այլ և ցրվել

Իսկապէս, եթէ մեր ինտելիգենցիայի Բազ-
ում կենտրոնանալու պատճառը արդիւնաբե-
րութեանը յատուկ օրէնքներն են, ապա ինչով
բացատրել այն հանգամանքը, որ ինտելիգեն-
ցիայի աչքի ընկնող հոսանքը դէպի Բազու
տեղի է ունենում միայն վերջին 4—5 տարի-
ները: Ինչու այդ հոսանքը չը կար մինչեւ այդ
ժամանակից Պատճառը շատ պարզ է: Արդիւ-
նաբերութեան զարգացումը չէր, որ մեր ին-
տելիգենցիային քաջից դէպի Բազու, այլ մի
բոլորովին պատահական դիպում—ուսումնա-
բանների հարցը: Հազարաւոր ուսուցիչներ
յանկարծ մնալով անգործ, դիմեցին Բազու իրանց
գլուխը պահելու համար: Եղան, ի հարկէ, բացա-
ռութիւններ, որոնք քահանայ ձեռնադրվեցին:
Եղան այնպիսիները, որոնք Պարսկաստան գնա-
ցին՝ որպէս ուսուցիչ: Եղան և անհասակներ,
որոնք գիւղերում սկսեցին հողագործութեամբ
պարագել, տանտէր դարձան և այլն:

Այն բոլոր երկիրներում, ուր կապիտալը տի-
րապետում է իր «երկաթէ օրէնքներով», այն-
տեղ մենք տեսնում ենք, որ արդիւնաբերական
կենտրոններն է ձգտում ինտելիգենցիայի ամե-
նակենսունակ, ամենազաղափարական մասը,
որովհետեւ այդ տեսակ կենտրոնները ներկա-
յացնում են գաղափարական գործունէութեան
համար համեմատաբար լայն առաքելից, քանի
որ կենտրոններում էլ գտնվում հասարակ ժո-
ղովրդի ամենաառաջադէմ տարրը—բանու-
ղասակարգը: Մեր մէջ, ընդհակառակը,
մենք տեսնում ենք, որ, օրինակ, Բազում
կենտրոնացած է մեր ինտելիգենցիայի համե-
մատաբար գաղափարազօրեւ մասը, իսկ գա-
ւառական խուլ անկրկններում ապրում և
գործում են աւելի գաղափարական տարրերը:
Ինչու է դա պատճառը, եթէ ոչ այն, որ մեր

երկրային կայսրութեան մայրաքաղաքում կենտ-
րոնացած խուլարարների գունդերը և միջոց-
ներ ձեռք առնել ապահովելու հաղորդակցու-
թեան ճանապարհը Պէկինի հետ: Այսու ամե-
նայնիւ այդ բարեկամող պայմանները չեն փոխի
Ռուսաստանի նախօրը գծադրած ծրագիրը,
որի հիմնական սկզբունքները բացատրված
են կառավարչական նախընթաց հաղորդագրու-
թիւններով: Ռուսաստանը, ինչպէս ասված էր,
պատերազմ չէ յայտնի Ձինաստանին. ուսա-
կան զօրքերը մտան հարեւան պետութեան եր-
կիրը որոշ նպատակներով, որոնցից պիտաւոր
այժմ իրագործված է: Որպէս զի թիւրքիմա-
ցութիւնների կամ սխալ բացատրութիւնների
առիթ չը արվի Ռուսաստանի դիտարութիւն-
ների վերաբերմամբ: Թագաւոր Կայսրը բարե-
հաճեց հրամայել արտաքին գործերի մինիս-
տրութեան գնումաւարչին ուղարկել արտասահմա-
նի ուսական ներկայացուցիչներին մի շղարե-
րական հետազոտ, որի մէջ ասված է, թէ դա-
նակից զօրքերը Ձինաստան ուղարկելու ժամա-
նակ Կայսերական կառավարութիւնը առաջար-
կել էր դիվալարվելու համար հետեւեալ հիմ-
նական սկզբունքները. 1) ընդհանուր համա-
ձայնութիւն պահպանել պետութիւնների մէջ,
2) պահպանել Ձինաստանի հիւսիսային պետական
կազմը. 3) հետեւել այն ամենը, ինչ որ կարող
էր պատճառ դառնալ երկրային կայսրութեան
բաժանմանը, և 4) վերականգնել ընդհանուր
ոյժերով օրինաւոր կենտրոնական կառավարու-
թիւն Պէկինում, որը կարողանար ինքնուրոյ-
նաբար պահպանել կարգ և խաղաղութիւն
երկրի մէջ: Այս կէտերի վերաբերմամբ համա-
բեա բոլոր պետութիւնների մէջ կայացաւ
համաձայնութիւն: Ուրիշ ոչ մի նպատակի չը
ձգտելով՝ Կայսերական կառավարութիւնը
մնում էր և մտադիր է այսուհետեւ ևս
մնալ հաւատարմ վերեւ յիշված ծրագրին:

Երբ Մանչուրիայում վերականգնված կը լի-
նի հաստատուն կարգապահութիւն և բոլոր
անհրաժեշտ միջոցները ձեռք առնված կը լի-
նեն երկաթուղու գծի ապահովութեան համար,
որի շինութեանը ապահովված է ամեն ձեռք
պատշաճաւոր համաձայնութեամբ Ձինաստանի
հետ, Ռուսաստանը չի յապաղի դուրս հանելու
իր զօրքերը հարեւան պետութեան սահմաննե-
րէն:

Դաւառը գաղափարական գործունէութեան հա-
մար աւելի լայն առաքելի է ներկայացնում, քան
մի որ և է Բազու Բազուի բանտարկները, չը
ներկայացնելով բանտարկւած դասակարգ, ոչնչով
չեն զանազանվում մեր գիւղացիներից, քանի
որ նրանք նոյն գիւղացիներն են, որոնք ժա-
մանակաւորապէս եկել են Բազու՝ դարձաւ
գիւղը վերադառնալու համար: Եւ մինչդեռ
Բազում միայն մի քանի բանտարկ (կամ որ
մի և նոյնն է—մի քանի գիւղացու) ընկնում
է մի ինտելիգենտ, մեր գաւառներում շատ
անգամ հազարաւոր գիւղացիներն մի ինտե-
լիգենտ չէ հասնում:

Եթէ մենք մեր առջեւ չը կառուցանենք ե-
րեւակայական պատեհներ, չը կաշկանդենք
մեր ձեռքերը զանազան երեւակայական «եր-
կաթէ օրէնքներով» և զիմենք մեր առողջ
գաղաղութեանը, կը տեսնենք, որ ինտելիգեն-
ցիայի դէպի Բազու տեղի ունեցող հոսանքը
մի անխուսափելի ճակատագրական երեւոյթ
չէ ներկայացնում և որ նա, յամենայն դէպս,
ոչ միայն ցանկալի երեւոյթ չէ, ինչպէս պ. յո-
դուածագիրն է կամենում ապացուցանել, այլ
ընդհակառակը՝ անպայման կորստաբեր ժողո-
ւրդի թէ բարոյականի տեսակէտից և թէ
անտեսականի:

Առաջ բերելով հայի խնդիրը, պ. Դաւթեան
հարց է առաջադրում. «Եւր դիմել, ի՞նչ անել, ինչով
պարագայի, որտեղ պաշտօն որոնեն անպաշտօն
ուսուցիչները: Դարաբերլիսայում, Իդիբրում,
Քարվանսարայում կարող են նրանք ապրել,
պիտանի լինել և այլն»:

Որ Դարաբերլիսայում, Իդիբրում, Քարվան-
սարայում մեր ուսուցիչները քաղցած չէին
մնայ, որ նրանք կարող էին այդ տեղերում
իրանց համար անհամեմատ աւելի յարմար

րից, եթէ միայն այդ բանին արդեւ չի լինի
միւս պետութիւնների գործողութեան եղանա-
կը: Ակնհերե է, որ օտար պետութիւնների և
միջազգային ընկերութիւնների ունեցած շահե-
րը, ինչպէս Ռուսաստանից գրաւված առեւտրա-
կան բաց նաւահանգիստ Նիւփոնում, այն-
պէս էլ բոլոր երկաթուղային գծերի վրա, ո-
րոնք վերականգնված են ուս զօրքերի ձեռ-
քով, մնում են բոլորովին անխախտ և բոլո-
րովին ապահովված: Հէնց որ չինական օրինա-
կան կառավարութիւնը իր ձեռքը կառնի կա-
ռավարութեան զեկը և կը նշանակէ կարեւոր
լիազօրութեամբ օժտված ներկայացուցիչներ՝
պետութիւնների հետ բանակցութիւններ վա-
րելու համար, այն ժամանակ Ռուսաստանը,
համաձայնվելով բոլոր օտարերկրացի կառավա-
րութիւնների հետ, չի դանդաղի լիազօրներ
նշանակել այդ նպատակով և ուղարկել նրանց
այն տեղը, որ կընտրվի առաջիկայ բանակցու-
թիւնների համար:

Այս շրջաբերականը հաղորդելուց յետոյ օ-
տարերկրացի պետութիւններին՝ իսկական քա-
ղաքացիական խորհրդական Գիրսին և գնեւ-
րալ-լէյտենանտ Լինկոլնին հրամայված է ա-
ռանց յապաղելու հոգ տանել Բարձրագոյն
մտադրութիւնների իրազգործման մասին՝ կայ
սերական զենսպանատան ամբողջ կազմը, ուս-
տահպատակներին և ուսական զօրաբաժինը
Պէկինից Տեանձին տեղափոխելու վերաբեր-
մամբ, որի ժամանակ, անկասկած, նրանք
պէտք է ի նկատի ունենան տեղական պայման-
ները:

ՄԱՄՈՒՆ

Ի՞նչպէս է դուր գալիս ձեզ, ընթերցող, այս
կտորը «Новое Время»-ից, հէնց իրան, Սու-
վորինի յօդուածից:

«Առաջին միջոցը (որ պէտք է ձեռք առնել
Ձինաստանում) պէտք է կայանայ նրանում,
որ ստիպեն քրիստոնէայ միսիօներներին դէն
զգիլ իրանց առեւտրական նպատակները և
չինայիններին քրիստոնէայ դարձնելու վաճա-
րականական ձեռքը: Քրիստոնէայ սիրոյ և
եղբայրութեան Աստուած է և ոչ թէ ա-
ռեւորի և չարչիութեան... Ձինացիները խա-
ղաղաբէր ժողովուրդ են և համբերող կրօ-
նական հարցերում... Նրանց խորթ է մար-

պաշտօններ գտնել, քան թէ Բազում,—դա,
մեր կարծիքով, մի այնպիսի փաստ է, որ կա-
րօտ չէ երկար ու բարակ բացատրութիւննե-
րի: Իսկապէս որ աւելի յարմար պաշտօն կը
լինէր դիւղում ծնված և թեմական պարզ
աւարտած մի ուսուցչի համար, հաշուապա-
հութիւն անել Բազում, թէ քահանայութիւն
անել գիւղում, արհեստանոց կառավարել Բազ-
ում, թէ տանտէրութիւն անել գիւղում:
Միթէ գիւղական քահանաները կամ տանտե-
տէրները քաղցած են մնում: Կամ դուք Բազ-
ում հաշուապահութիւն կամ մակերութիւն
անելով հասարակութեանը աւելի մեծ օգուտ
կարելի է տալ, քան գիւղում քահանայութիւն
ու տանտէրութիւն անելով: Սակայն թող-
նենք մի կողմ քահանայութիւնը և տանտե-
տէրութիւնը,—կարող են լինել այնպիսիները,
որոնք աշխարհաւ են այդ պաշտօնների համար
կամ սկզբունքով հակառակ քահանայանալուն:
Բայց ինչով բացատրենք այն երեւոյթը, որ
Պարսկաստանի հայաբնակ գիւղերի դպրոցները
մեծ մասամբ դանկում են միանգամայն սղէտ
ուսուցիչների ձեռքին, իսկ նրանցից շատերը
չեն բացվում ուսուցիչներ չը գտնելու պատ-
ճառով: Հէնց «Մշակի» վերջին ամիսների հա-
մարներից մէկում յայտնված էր, թէ Պարս-
կաստանում երկու ուսումնարան փակ են
մնացել, որովհետեւ Բազուից հրաւիրված ու-
սուցիչները չէին գնացել: Վերջապէս նոյն
նախկին ուսուցիչները չէին կարող մնալ գիւ-
ղում և գիւղականութեամբ պարագայ (ինչ-
պէս արել են նրանցից մի քանիսը):

Ա. Ամ.

(Ը շարունակվի)

գործունեության ոլորտ, մինչդեռ արեւմտեան քրիստոնեականները լին են այդ ոլորտ, որ տուրքոված է ներթափանցող թիւնքէք, ինչպէս էին մեր (ուսմանքի) նախնիները պաշտպանութեամբ կաթողիկոսութիւնի, որ թշնամացրեց մեզ եւ լեւերին... Այն ժամանակվայ վաւերաթղթերում տեսնում ենք առեւտրութիւն դէպք լինել՝ ոչ իրեն դէպք լինել, այլ դէպք լինել իրեն դէպք կաթողիկոս, որ ուղղութեամբ մեր ազգային կրօնը, ազգայնը եւ վայրենութիւն համարելով այն: Միայն լինել էին մեր նախնիները թէ ոչ, որն է լաւ՝ կաթողիկոսութիւնը, թէ ուղղափառութիւնը, գրանցում է հարցը: Հարցը նրանում է, որ մարդու համար իր կրօնը աւելի լինել է աւելի լաւ, քան օտարին: Եւ ինչպիսիքը ասում են քրիստոնեաներին ոչ թէ նրա համար, որ նրանք քրիստոնեայ են, այլ որովհետեւ քրիստոնեութիւն ընդունողները արտօնաւոր չէին այնքան որ դառնում: Ազգային կրօնը այդպիսով աշխարհայն ստորագրում է, եւ ստորագրում է այդ կրօնը դառնող ժողովուրդը:

Լաւ է թէ վատ, որ ստույգն պաշտպանները երբեմն պաշտպան են հանդիսանում եւ ճշմարտութեան, այդ դժուար լուծելու հարց է: Ով կիշծ միջոցներով ստույգն է պաշտպանում, նա յանցանք է գործում, բայց ով կեղծութեամբ է պաշտպանում ճշմարտութիւնը, նա կրկնակի յանցանք է գործում, որովհետեւ կեղծոտանում է եւ մաքրութիւնը, մօտաւորապէս այս խօսքերով է յարձակում: Բնօրէն իր հակառակորդներին մէկի վրա: Սակայն այն էլ կարելի է պնդել, որ խեղճ ճշմարտութիւնը թերեւս յաղթանակի չարժանանար երբեք, եթէ նրա պաշտպանները լինելին միմիայն անկեղծները, որոնք թիւր այնքան սահմանափակ է մեր թշուառ աշխարհում: Եթէ ուղղում էք, նոյն իսկ ամենալաւ ապացոյցը, որ մի միտք անպայման ճշմարիտ է, այն է, որ բոլոր մարդիկ ընդունում են նրա ճշմարտութիւնը, երբ իրանց չանք հակառակ չէ դրան: Եթէ կեղծողներն էլ այնքան հետեւողական լինէին ստի պաշտպանութեան մէջ, ինչքան անկեղծները ճշմարտախորհութեան մէջ, խեղճ Որմիշը վաղուց ասպարէզը թողած կը լինէր հզօր Անդրանիկ:

Տխուր երեւոյթ է այդ, բայց ինչ արած, կեանքն էլ մասամբ առեւտրի նման է, ազնիւ մետաղ չէ կարողանում փոխանակութեան միջոց ծառայել առանց անազնիւ մետաղների խառնուրդի:

Վերջերք հենց կաթողիկոսային օգնութիւնը սոված եւ որը թիւրքահայերին: Ասել, թէ այդտեղ, բոլոր դէպքերում եւ ամեն մի օգնողի կողմից, դեր է խաղում միայն հաւատարմութիւնը որսալու ցանկութիւնը—այդ աւարարութիւնը կը լինէր: Բայց մենք արդէն շատ անգամ ասել ենք ունեցել յոյս տալու, թէ որքան մեծ չափով է դեր խաղում այդ ցանկութիւնը այդ ինքնընտրութեան տուրք գործի մէջ: Հայր Շարլոտան (որի անունը մի ժամանակ այնքան թանկ էր ամեն մի հայի համար) օրգանը «Oeuvre des écoles d'Orient»-ի ամեն մի համարը նորանոր փաստեր է բերում մեր ասածի ճշմարտութիւնը ապացուցանելու համար: Այդ հրատարակութեան վերջին յուլի-օգոստոսեան տետրում ինքը Շարլոտան տպել է մի առաջնորդ, որ սկսվում է տխուր տողերով եւ տխուր փաստերով թիւրքացաշայատանի վերջին ծայր թըշուառ անտեսական դրութեան նկարագրութեամբ, բայց վերջանում է ուրախ չեղերով: «Այդ յուսահատութեան եւ սովի մռայլ պատկերների կողքին, գրում է Շարլոտան, մենք միթէրութիւն ունենք հաւատալու, որ արեւելքական եկեղեցու համար այնքան կարեւոր գործը, մեր հերձուածող եղբայրներին դարձը, չարունակում է լինել ակնյայտ իրարով օրհնված Աստուծոյ:»

Սակայն, ասում է յօդուածագիրը, պէտք է եռանդով շարունակել իրանց նպատակներ ուղարկելը:

«Այսպէս այդ թանգազին շարժումը դէպի միութիւնը, որ, թուում է, ձգտում է ընդհանրապէս կանգ կանգնել թերեւս անուղղելի կերպով փչանալ ընդմիջ, որովհետեւ նա հաւանորէն կողմից յօգուտ անգլիական բողոքականութեան կամ մի ուրիշ կրօնի, որոնք երկուսն էլ ունեն անհրաժեշտ փող, եւ որոնք սկզբից եւ եթ ճիշդ են թափում մեր տեղը բռնելու:»

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Օգոստոսի 18-ին

Պ. Հ. Տիգրանեանցի Ալեքսանդրոպոլից ուղարկած նամակը, որ տպված է «Մշակի» 150-րդ համարում, սուտ ու սխալ է սկզբից մինչեւ վերջը: Մենք ապացիքներ, երբ, կարդալով այդ յօդուածը, հասանք այնտեղ, ուր անբարեխիղճ յօդուածագիրն ասում է. «Բայց ահա նոր փո-

թորիկ, քաղաքում բռնկում է մի չը տեսնված ու յամառ աղիտայիս. առաջ է գալիս հին հաւածանքը կաթողիկոս-Մուրզայի դէմ: Ո՞ր հաւածանքի մասին է խօսքը, ով հաւածեց նրան, ով նրան մերժեց իր օգնութիւնը: Ցամաքում ենք, որ ինքը Կարա-Մուրզան առաջինը չը հերքեց այս գրադարտութիւնը: Այդ տարբերակ թղթակցութիւնը գրվելուց 3—4 օր առաջ, այստեղի քաղաքագլուխ պ. Տէր-Պետրոսեան մեր ներկայութեամբ ընդունեց պ. Կարա-Մուրզային, խոստացաւ իր ջերմ աջակցութիւնը եւ գրամական նպաստ մեր եկեղեցիների համար քառաձայն խումբ կազմելու համար. եւ այդ դէպքի հետեւեալ օրը, քաղաքագլուխը տեսնվելով տեղիս յաջորդ Մատթէոս վարդապետի հետ, մտածել ու որոնել են միջոցներ, այդ ցանկալի մտադրութիւնը իրագործելու համար: Այս մէկի Այն օրը, երբ պ. Կարա-Մուրզան ցրվել էր իր խումբը, յայտարարելով, որ «համարք յետաձգվում է», նոյն օրը, ժամը 3-ին մենք պատահեցինք խմբին մասնակցող պարոններից մէկին, հարցրինք գործի դրութեան մասին, եւ խոստացանք նրան այդ օրն եւ եթ գնալ եւ վերցնել տոմսակներ եւ այդպէս օգնել պ. Կարա-Մուրզային: Մեր ասած ճիշդ ժամին մենք դարձող մտանք, ուր տեղի էին ունենում համերգի կրկնութիւնները, եւ տեսնվելով պ. Կարա-Մուրզայի հետ, առաջարկեցինք նրան մեր աջակցութիւնը—գնել տոմսակներ 30—40 բուլլու, միաժամանակ ցաւ յայտնելով, որ այս անգամ մենք մեր զբաղմունքների պատճառով չը պիտի կարողանանք առաջին անգամվայ նման յոյս տալ ամեն տեսակ ջանք ու աշխատութիւն Պ. Կարա-Մուրզան առանց այլեւայլութեան մեզ պատասխանելու, թէ «համարք մի շարժում յետաձգվում է», թէ «հա գնում է Կարա եւ վերադարձին կը տայ իր համերգը»: Թէ տոմսակ չէր ծախվել մինչեւ ներկայացման նախընթաց օրը, դա բոլորովին զարմանալի բան չէ եւ յոյս չէ տալիս որ եւ է աղիտայից ցրվելութիւն: Գուցէ մեր հասարակութիւնը հետեւեալ օրվայ ընթացքում եւ երկուշաբթի գնէր բոլոր տոմսակները: Բայց վերջապէս հասարակութեան յանձնարք ինչի փաթեթիկ երիտասարդութեան վրին: Մեր հասարակութիւնը երբ է մի առանձին գրկաբացութեամբ դիմաւորել մեր արտիստներին: Յիշեցք, որ նոյն իսկ տիկին Սիրանոյշի առջին եւ երկրորդ ներկայացումներին դաժնիճը դատարկ էր եւ միայն վերջին խաղի ժամանակ գոյացաւ 300 բուլլու չափ գումար, այն էլ միմիայն չորսհիւ տողերիս գրողի մի քանի օրվայ չարչարանքների:

Պ. Մ.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Օգոստոսի 19-ին

«Մշակի» № 150-ի առաջնորդող յօդուածը, «Մեր երիտասարդութիւնը» վերնագրով այստեղ մեծ համակրութեամբ եւ գոհութեամբ կարդացվեց:

Հոգ չէ, որ մի քանի փարիսեցիներ հալածում են մի երաժշտագետի, մի աշխատաւորի, մի հասարակական գործիչի, մի թէ քիչ հալածեցին անհամաձայն աւելի նշանաւոր գործիչներ—Նալբանդեանին, Նազարեանին, Արծրունուն, եւ միթէ դրանով նրանց փառքը պակասեց. ոչ, ամենաինչ ոչ, Ժողովուրդը գիտէ յարգել իր ճշմարիտ բարեկամին: Իրաւ է, պ. Կարա-Մուրզան հալածվեց այստեղի մի քանի փարիսեցիներից, որոնք սակայն առանց խղճահարվելու անուշ են անում եկեղեցու փողը եւ այնու ամենայն իրանք իրանց համարում են եկեղեցու հաւատարիմ զաւակներ եւ որոնք հաշտ աչքով են նայում, երբ գալիս է այստեղ մի ձեռնածու կամ մի ցրվել եւ քաղաքից տանում է 10—20 հազար բուլլի: Այն ժամանակ մեր փարիսեցիները գնում են նայելու «մերկ աղջիկների սերունդ ոտներին»։ Ոչինչ, այդ Հայաստանաց եկեղեցուն վնաս չէ, բայց երբ գալիս է մի երաժիշտ, մի արուեստագետ, բարեխիղճ մարդ եւ ինդրում է մի օր եւ է չնչին դիւնքի մի մասը յաւակցելով յօդուտ տեղական պիտոյներին—այստեղ մեր պատուելիները աչքերը բաց են անում եւ սկսում են հարցնել՝ «արդեօք երաժիշտը լուսաւորչական է, կաթողիկոս թէ աւետարանական»: Ի՞նչ անենք, թէ պ. Կարա-Մուրզան կաթողիկոս է, հօ իր համերգների ժամանակ «Մեր հայրենիք», «Անի քաղաք» եւ «Զմիւրձին» է երգել տալիս:

Շիրակցի

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ժէլէզնովոյի, 15 օգոստոսի

Յուլիսի 23-ին, Պետրոգորսկի հայոց եկեղեցում, նախաձեռնութեամբ Կովկասի հանքային ջրերում ժողոված հայերի եւ կարգադրութեամբ հոգեւոր իշխանութեան, կատարվեց հոգեհանգիստ ի յիշատակ Գրիգոր Զանչեանի, Հոգեհանգիստից յետոյ առաջարկեցին հանքային ջրերում ընտելող ծանօթներին յարգել հանգուցեալ հրապարակաօսի յիշատակը, ժողովելով մի փոքրիկ գումար, որը հիմն լինէր այն գումարի, որով պէտք է ապահովվէին նրա խմբարար «Եղբարական օգնութեան» արգիւնքով բացված որբանոցները: Առաջարկութիւն ընդունվեց եւ հաւաքվեց 520 բուլլի հետեւեալ անձինքներից:

Յովհաննէս Աղաւան, Եղբայրներ Բուդաղեանց, Ալեքսանդր Աբէլեանց 50-ական բուլլի, Զարբաիւս Մէլիք-Աղաբեանց, Գասպար Տէր-Մարգարեան, Մանուշար Աւագեանց, Ստեփան Թուսանեանց, Լազար Յակովբեանց, Սիմէօն Առաքելեանց, Եղիա Եղիազարեանց, Սամուէլ Այւանեանց 25-ական բուլլի, Երուանդ Թուսանեանց, Յովհաննէս Դորդանեանց, Լազար Մայիլեանց, Միքայէլ Խոսրոբեանց, Ներսէս Աբէլեանց 15-ական բուլլի, Գրիգոր Շարաբանեանց, Գրիգոր Միրզոյեանց, Սամուէլ Դիւղարեանց, Միքայէլ Դանիէլեանց, Աղապան Դիւղարեանց, Մ. Բարախանց, Շ. Մէլիքեան 10-ական բուլլի, Գրիգոր Այվաղեանց 25 բուլլի:

Այդ 520 բուլլու արդիւք Պետրոգորսկի փոխարկի Մօսկով «Русскія Бѣдомости» լրագրի խմբագրութեան, որն ուղարկեցի եւ հետեւեալ հետադիրք, «Ժամանակ յայտնի հրապարակաօս Գրիգոր Զանչեանի մահանքը եւ ողբալով անիւտարիների կորուստը, այժմ կովկասեան հանքային ջրերում գտնվող բազմաթիւ հայեր, յուլիսի 23-ին Պետրոգորսկի հայոց եկեղեցում հոգեհանգիստ կատարելուց յետոյ, կանխադրվ յարգել «Եղբարական օգնութեան» խմբագրի եւ թիւրքահայ որբերի համար որբանոցներ հիմնող յիշատակը, նուիրեցին այդ որբանոցները պահպանելու համար իրանց լուծանք, հինգ հարիւր քսան բուլլի, որ արդ հետ ուղարկում եմ խմբագրութեանը պետական բանկի փոխանակարդով Լիւդյա եւ, որ այս անշանք գումարը օրինակ եւ սկզբնական ֆոնդ կը ծառայի աւելի խոշոր նուիրատուութիւնների համար:»

Գ. Թ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Աւելի քան մի շաբաթ առաջ մենք ստացանք Ալեքսանդրոպոլից մի նամակ երեք ստորագրութեամբ, որոնցից միայն մէկը մենք կարողացանք տպել (№ 150): Այդ նամակում հաղորդվում էր մի վրդովեցուցիչ փաստ,—Ալեքսանդրոպոլի երիտասարդութիւնը խանգարել է Կարա-Մուրզայի համերգը, որովհետեւ նա կաթողիկոս է դաւանութեամբ: Խմբագրութիւնը, ի հարկէ, վրդովվեց այդ անարգ վարմունքից եւ նայելով նրա վրա, իրեն մի նոր ապացոյց մեր երիտասարդութեան բարոյական անկում, իր վիշտը յայտնեց այդ ամեն տեղ նկատվող անկման առիթով: Թէ թղթակցութիւնը, թէ խմբագրականը զանազան արձապանքներ զարթեցրին մեր հասարակութեան մէջ: Ալեքսանդրոպոլից մենք ստացանք մեր երկու թղթակցներից երկու իրար հակառակ նամակներ, որ տպուծ ենք այս համարում: Ինչպէս ընթերցողը կը տեսնի, դրանցից մէկը պնդում է, թէ վերջինեալ թղթակցութեան հաղորդած լուրը սուտ է, իսկ միւսը՝ հաստատում է այդ լուրը: Որին հաւատալ: Մենք, յամենայն դէպս, ուրախ կը լինէինք, եթէ ճիշդ որ հերքվէր այդ ամօթարար լուրը: Բայց այդ անպատկերելի մենք ստացանք մի հետագիր Ալեքսանդրոպոլից բացված թիւ ստորագրութիւններով, որով ստորագրողները, երեւի այլեւս անաղարտաբար երիտասարդներ, յայտնում են, թէ Կարա-Մուրզայի անաշուղթութիւնը բացաւ արվում է ոչ թէ նրա կաթողիկոս դաւանութեամբ, այլ նրա ճանաչող վերաբերութեամբ դէպի իր գործը եւ նախընթաց, մէջտ միատեսակ կօնցերանների անաշուղթութեամբ: Կօնցերանաւոր, ինչպէս միշտ, այնպէս եւ այժմ ուղղում էր դուրս գալ (հասարակութեան առաջ) անպատաստ երեցեցիկ խմբով երեք չորս կրկնութիւնից յետոյ: Եթէ հետագիրը սահմանափակվէր դրանով, մենք միայն ցաւ կը յայտնէինք, որ մեզ սխալեցրել են եւ ուրախ կը լինէինք, որ մի աբսուրդ վերացվում է մեր երիտասարդութեան մի մասի վրայից: Բայց այլեւս անաղարտաբար պարոնները կարծել են, թէ հեռագիրը աղից զուրկ կը լինի, եթէ նրա տունը ամբարտաւան չը լինի, եւ ահա նրանք համեմել են հեռագիր «Եթեթեւամիտ վերաբերմունք» խօսքով: Հաւատացած ենք, որ հեռագիրը ստորագրող ալեքսանդրոպոլից պարոնները, եթէ սկսեն փութը ինչ ինքեք կերպով քննել հարցը, կը համոզվեն, որ խմբագրութիւնը այդտեղ

վարվել է այնպէս, ինչպէս պէտք է վարվել: Մեր առաջնորդող յօդուածի համար մենք ստացանք Շամախուց մի համակրական նամակ, որ կրում է բաղմաթիւ ստորագրութիւններ:

Թէ որքան մեծ է Ռուսաստանում բարձրագոյն մասնագիտական դպրոցների կարիքը—այդ արդէն վաղուց յայտնի է ամենքին, բայց եւ այնպէս լրագրիւնները ամենայն տարի, օգոստոսի վերջերին, առաջ են բերում մի շաբաթ թւեր, որոնք յոյս են տալիս, որ այդ կարիքը քանի գնում աւելի եւ աւելի զգալի է դառնում, չը նայելով որ վերջին տարիների ընթացքում մասնագիտական բարձրագոյն դպրոցների թիւը երկուսով աւելացաւ: Այդ դպրոցներից շատերը յուլիսի վերջերին կամ օգոստոսի սկիզբներին դադարեցրին ինչիքների ընդունելութիւնը: Լեւոնային ինստիտուտում կարող են ընդունվել 80 հոգի միայն, այն ինչ խնդրը են տուել 1,244 հոգի: տիւնօլօգիական ինստիտուտում կայ 260 տեղ, խնդրը են տուել 1,053 հոգի: Հաղորդակցութեան ճանապարհների ինստիտուտում կայ 115 տեղ, խնդրը են տուել 900 հոգի: Էլեքտրօտեխնիկական ինստիտուտում խնդրը են տուել 400 հոգի, այն ինչ կարող են ընդունվել միայն 50 հոգի: Քաղաքային ինժեներների ինստիտուտի վարչութեան խնդրը են տուել 409 հոգի, ընդունվելու են միայն 100 հոգի:

Անգլիայի արուեստագետ Էդուարդ Լաւի Գարբէշ Լոնդօնից Կովկաս է եկել Մեծ Մասիսի վրա հետազոտութիւն անելու: Նրան հետաքրքրում է այն հարցը, թէ կան որ եւ է ցուցումներ բիրկական Նոյեան տապանի աւանդութիւնը հաստատելու համար: Զանապարհօրը 76 տարեկան է եւ նրան աջողվել է 13,000 ոտնաչափ բարձրաշաղ Մեծ Մասիսի ռուսական եւ մասնաւոր թիւրքական լանջերի վրա: Թիւրքիայի սահմանից բարձրանալու ժամանակ թիւրքաց կառավարութիւնը տուել է դիւրութիւնները արը բարձրանալու համար: Ալեքարդ խոլարիւն այժմ Թիֆլիսում է, առաջիկայ շաբաթ Լոնդօն է վերադառնալու, եւ 1901 թ. պարսեան պատրաստութիւններով վերադառնալու է եւ շարունակելու իր գործը: Զանապարհօրին Լոնդօնից ուղեկցում է Արշակ Բաֆֆի:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի քաղաքային դուռայի պարապմունքները կը վերանորոգվեն սեպտեմբեր ամսից եւ առաջին նիստը տեղի կունենայ առաջին երկուշաբթի օրը, սեպտեմբերի 4-ին:

Մեզ հաղորդում են, որ Գրիգոր Զանչեանի յիշատակին հոգեհանգիստ են կատարել Օդեսայում, Սարիլամբիում (Կարսի նահանգ) եւ Բուլճարիսի նահանգի Սալիսէթ գիւղում: Օդեսայում, բացի հայ համայնքից, ուսանողներից եւ թիւրքահայ գաղթականներից, ներկայ են եղել նոյնպէս եւ ռուս պրօֆէսորներ, փաստաբաններ, գինուորականներ եւ այլն:

Կ. Պօլսից հեռագրով հաղորդում են «Прав. Вѣстник» լրագրին հետեւեալ. «Niger» յոգեհանգը, որի վրա նկատվող ժամանակավոր հիւանդ մի հայ, ուղարկվեց դէպի Կազօմենեան հիւանդանոցը, այնտեղ գիտեղելու համար հիւանդին Միւս ճանապարհորդները կենթարկվին 12 օրվայ կարանտինի, իսկ նրանց ապրանքները կենթարկվին դէզինֆէկցիայի:

Բագուի նահանգի ռուս գիւղերից մէկում տեխի վրա երեւացել է հիւանդութիւն, որի պատճառը մի միջատ է, որ բուն դնելով սեխի մէջ նրան կծկում է եւ կանգնեցնում պտղի զարգացումը: Այդ հիւանդութեան վրա առանձին ուշադրութիւն է դարձրել պետական կառավարութիւնը: Գիւղացիները, որը եւ դիմել է Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեանը, խնդրելով ցուցումներ այդ հիւանդութեան դէմ, որի պատճառով սեխը բոլորովին փչանում է եւ ուտելու համար դառնում է անպիտան:

ԿՕՁՐԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 20-ին Կօլօրում եկեղեցական-ծխական ժողով կայացաւ, թէ եւ դրա մասին վարդօք ծխականներին յայտնված չէ՞ր ոչ լրագրի միջոցով, ոչ առանձին հրապարակութիւնով: Ժողովին նպատակն էր 1) ընտրել Կօլօրի հայոց եկեղեցու նորագործութեան համար ընտրված հոգաբարձուներից մէկի տեղ նորը եւ 2) առաջարկել Կօլօրի հայ ժողովրդին, եթէ նա վաճառի եկեղեցուց հերթով գնացող եւ հովուող քահանայները

տարիներով, բայց դա օգուտ կը բերէ միայն կոնցէսիաներ որոնողներին, բանկիրներին եւ միսթոնէրներին, եւ ոչ թէ ամէրիկական ժողովրդին, այն ժամանակ, որը համակրութեամբ կը նշանակէր այդ խնամքը իրենց հոգովն ու անունովն:

ՄԱՐԻՆԵՐԱՆ. Շահը ժամանակ երեք շաբաթով:

ԳԼԱՍԳՈՎ. Ժամանակակից կառավարող տասնութըք հիւանդը ընդունվեց այսօր. հիւանդանոցում այժմ արդէն 83 մարդիկ են գտնուում բժշկիկներ հսկողութեան տակ. այն կինը, որը ամենից առաջ հիւանդացու, առողջանում է, ժամանակակից մեծած կրկու հիւանդների զիւղները այրեցին կաթոլիկ հոգեւորականութեան թոյլտուութեամբ: Մաքսանային յանձնաժողովը հրաժարվում է մաքուր սանիտարական վկայականներ տալ հետաքննող նաւերին: Այն տեղը, ուր ժամանակակից կրկու, սանիտարական կողմից վտանգաւոր է համարված. բոլոր աները անտահանված են եւ բոլոր ընտանի կենդանիները, նախագործութեան համար, ոչնչացրված են:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԿԱ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱՌՈՒԴԻ
(ժամերը Պետերբուրգի հաշվով)
տարբերութիւնը 58 րոպէս:

№ 5 գնացքը: № 3 գնացքը:
Բազմաթիւ գույք է գալիս. 4 ժ. 1 ր. 47. 11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում. առ. 8 ժ. 53 ժ. 5 ր. 34 ժ.
Թիֆլիսից դուրս է գալիս. 9 ժ. 32 ժ. 6 ր. 34 ժ.
Բաթում է հասնում. 9 ժ. 1 ժ. 7 ժ. 14 ժ.

№ 6 գնացքը: № 4 գնացքը:
Բաթումից դուրս է գալիս. 7 ժ. 50 ր. 7 ժ. 59 ր.
Թիֆլիս է հասնում. 7 ժ. 15 ժ. 8 ժ. 42 ժ.
Թիֆլիսից դուրս է գալիս. 7 ժ. 18 ժ. 10 ժ. 05 ժ.
Բազմաթիւ գույք է գալիս. 12 ժ. 10 ժ. 5 ժ. 16 ժ.

առաջ գնացք
Թիֆլիսից դուրս է գալիս. 11 ժ. 19 ր.
Բաթում է հասնում. 9 ժ. 41 ժ.
Բաթումից դուրս է գալիս. 11 ժ. 18 ժ.
Թիֆլիս է հասնում. առա. 9 ժ. 30 ժ.

Թիֆլիսից դուրս է գալիս. 9 ժ. —
Ալեքսանդրոպոլ է հասնում. առ. 7 ժ. 46 ր.
Կարս հասնում է. 9 ժ. 12 ժ. 56 ժ.
Կարսից դուրս է գալիս. 9 ժ. 3 ժ. 29 ժ.
Ալեքսանդրոպոլից դուրս է գալիս. 8 ժ. 35 ժ.
Թիֆլիս հասնում է. առ. 7 ժ. 15 ժ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԻՒՄՆՈՑ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուլիս, Վորոնցովի արձանի հանդէպ)
ա մ ե ո ռ, բ ա ճ ի կ ի ռ ա կ ի օ ռ ե ի ծ:
Ա Ռ Ա Ռ Օ Տ Ե Ր Ը

Բ. Ա. Նախասարգիւն—11—12 ժ. վարդապետութեան, վեներական (թիֆլիս) և միջառն. հիւանդ.
Կ. Մ. Ձիկովան—9—10 ժ. աշխ. ներքին և ներքինի.
Ի. Ֆ. Պրոսակովիչ—12—1 ժ. ակադէմի, քիմի, կուլուր. զի և կրթչի.
Զ. Բ. Բարանասեան—11—12 ժ. կանանց և երեխանց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեան—1—1/2 ժ. ներքին և երեխանց հ.

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը
Ի. Ֆ. Պրոսակովիչ—6—7 ժ.
Բ. Ա. Նախասարգիւն—7 1/2—8 ժ.
Վարս 50 կ. չքաղցնելու ձրի. համախորհրդի (կոնսիլիումի) և օպերայի համար առանձին.
Օ. Տ. Ասլանբեկով—տանը, ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. զինել 11—1 ժ.
Հիւանդանոցի վերանորոգչ.
Բժօկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ.

Մայր Աթոռի

ԳԵՌԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ
հարկաւոր է մաթեմատիկայի համալսարանաւարտ մի ուսուցիչ՝ չբաթական 18—19 դասով եւ 1500 ր. առձկուր: Դիմել ձեռնարանի վարչութեան, Էջմիածին: 2—3

Դ Պ Ր Ո Ց

տիկ. Կարո. Լիսիցեանցի

երկու սեռի մանուկների համար. Սիւսեանցի պարագլուխը իր հարազատ երեխաների հետ: Ընդունվում են մանկամիակիվ: Սեպտեմբերից բացվում է նաեւ պաշտօնի Դիմել—օգոստոսի 26-ից—Բնակութեան փողոց (Նախկին Սաղաթայա), սեփ. տ. № 29 (հշ.) 16—25

Ներսիսեան հոգեւոր դպրոցի վարչութիւնը սրանով յայտարարում է, որ նորից աշակերտների ըննութիւնները սկսվելու են օգոստոսի 30-ին: Նորից աշակերտները պարտաւոր են ներկայանալ ծնողեան վկայական (խական եւ ոչ քաղաքացի) եւ ծաղկի պատուաւորական վկայական: Առանց վկայականների նորից աշակերտները ըննութեան չեն ենթարկվի:
1—2 Տեղադ. Ս. Բալազեան

ԳԻՒԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՌՈՐ Է ՈՒՍՈՒՑԻՉ

Նախագաւառութիւն կը արվի Ներսիսեան չքաղաքացիներին, մանրամասն պայմանների համար դիմել Սոչի [Черн. грб.], Лаз. Айва-Зяну. 1—4

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՄԱՐՊԵՏԵՐ.
Եթէ կուզէք նորուս երգչուհիներ ձեռքը տալ Ս. ՊԱՏԱՐԱՐԻ
ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ
ամենալարմար տեղը, գիմնէթ. Армавир, (Кубанск. Обл.) регенту Симеону Шаалянц. Գինն է 15 կոպ.
50-ով պահանջողին 20% զիջում:
1—3

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՉ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՐՈՒՆ Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ Բ Ա Գ Ի ՈՒ Մ

Ընդունվում են երեխաներ եւ պատրաստվում օրիորդաց եւ տղայաց գիմնազիայի, բնական դպրոցի եւ այլ ուսումնարանների համար:
Մանկական պարտէզի նպատակն է կրթել երեխաներին (4—7 տարեկ.) ֆրէզերեան սիւսեանով: Ընդունվում են գիշերօթիկ եւ կիսա-գիշերօթիկ երեխաներ: Մանկական պարտէզի եւ ուսումնարանի մանրամասն ծրագիրը կարելի է ստանալ օգոստոսի 20-ից, Բազմաթիւ 8—8

Առանձին եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների
ԲՈՒՆԻԿՈՂԱՅՈՍ ԿԱՃԿԱՃԵԱՆ
Ընդունում է հիւանդներ օգոստոսի 17-ից երեւանեան հրապարակ, լուսանկար РОИОВЕ-ի տակը: 3—25

ԱՐԽԵՆԵԱՆ ԵՊԻՍԿՈՍ ՍԵՐԿԵԱՆ ՔԱՃԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ. ԳԻՆԵ Է 1 Բ.

Թիֆլիսում գիմն—Կենտրոնական եւ Զաք. Գրիգորեանցի գրաւմանաւորներին, նոյնպէս եւ Ալեքսանդր Ստեփանեանցին (Զուրաբովի քարվանսարայում): (Ե. հ. չ.) 5—10

Մի պատուաւոր հայ ընտանեք հասցիւթաւորներ (НАХЛѢДНИКИ) է ընդունում:
Հարցնել Ալեքսանդր Շաղինեանի խանութում, քաղաքային վարչութեան շինութեան մէջ:
(Ե.) 4—5



ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

տեղեկացել է, որ ինչ-որ նրան անցյալ անձինք առաջարկում են «Վօդկա-Գորա» եւ «Նախալովկա» կոչված տեղերում հողեր կապալով վերցնել ցանկացողներին՝ որոշելով վճարով ձեռք բերել վարչութիւնից յիշված կապալները: Կամենալով վերջ գնել զիւրահատեան մարդկանց շահագործողների արարածներին, վարչութիւնը յայտնում է ի դիմութիւն ամենքի, որ Նախալովկայում հողեր գնել եւ չեն արվում կապալով, մինչեւ ընդհանուր յատակագծի կազմելը, իսկ «Վօդկա-Գորայում» արվում են առանձին կանոններով, որոնք հաստատված են Թիֆլիսի քաղաքային խորհրդարանի կողմից եւ այն անձինք, որոնք ցանկանում են հողեր կապալով վերցնել այս վերջին տեղում, կարող են ստանալ առանց որ եւ է միջնորդութեան, գիմնով իրանց ինդիւստրիալ ուղղակի վարչութեան, եթէ միայն համապատասխանում են խորհրդարանի որոշման մէջ յիշված կանոններին: 3—3

Դ Պ Ր Ո Ց
Մ Ա Ն Կ Ա Ն Պ Ա Ր Տ Ի Չ
Ե. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
(ԵՆԵՂ. ԵՈՎԱԶԱՆԵԱՆ)
Ընդունվում են տղայք եւ օրիորդներ եւ պատրաստվում գիմնազիոն, բնական, վաճառական եւ այլ միջնակարգ դպրոցներ մտնելու համար: Ընդունվում են օգոստոսի 22-ից, ուսումը սեպտեմբերի 1-ից:
Մանկական պարտիզում ընդունվում են 4 տարեկանից:
Садовая [Бebutovская], домъ Шадинова, № 38. 1—10

Ուսուցիչական Պաշտօնի Տ Է Ր - Ց Ո Վ Ս Է Փ Ե Ա Ն Ի

(Սօցիալ, Բնութագրական փողոց (Նախկին Սաղաթայա) № 46:
Աշակերտների ընդունվում են սկսվում է օգոստոսի 28-ից: Ուսումը—սեպտեմբերի 1-ից: Ուսումնարանում կայ առանձին բաժանուններ փոքրահասակ երեխաների համար (Ե. հ.) 1—5

Բ Ր Օ Կ Ա Ր Ե Ի Ը Ն Կ.
յանձնարարում է
„Պ Ե Տ Ր Օ Լ“ (Հեղճուկ)
մագերը ամբողջով կամար:
(ՍՍ.ՊՈՆ) „Պ Ե Տ Ր Օ Լ“
(20) Մագերի թիվը ոչնչացնելու համար: 1—10

Թիֆլիսի Կենտրոնական գրաւմանաւորում

Ճախվում են հետեւեալ նոր գրքերը՝
Այվազեանց Բ.,—Աշոտ երկաթ, պատմական վէպ, Բ. տպագ. Թիֆլ. 1900 թ. գ. 1 ր.:
Բուրազեանց Ա. Բ.,—Մեր նկարագիրը, Թիֆլ. 1900 թ. գ. 10 կ.:
Շանթ,—Երազ օրեր, վէպ, Թիֆլ. 1899 թ. գ. 40 կ.:
» » Վերջին, վէպ, Թիֆլ. 1899 թ. գ. 60 կ.:
» » Դարձ, վէպ, Թիֆլ. 1899 թ. գ. 40 կ.:
» » Դերասանուհին, վէպ, Թիֆլ. 1900 թ. գ. 40 կ.:
Տէր-Արիստակէսեան Ե.,—Գաղթականի մը համարում կարծիքները, Մոսկվա, 1900 թ. գ. 50 կ.:
Դիմել Թիֆլիս, Въ Центральную Книжную Торговлю. (Ե.) 3—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լեւոնտուկայա փողոց, № 9)
Ցանկացողները ունենալ իրանց առեւտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ եւ աշակերտներին, թող բարեհաճեն գիմն կուրսերի հիմնովին, Ս. Մանուկեանցին: Աւարտողները ստացել են մասնագիտական առեւտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, եւ ունեն օրինաւոր ատտեստատներ:
ԸՆԴՈՒՆՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ
Կուրսերի ծրագրի եւ կանոնների կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Մովսիսեանցի ընկալանում: Օտարաքաղաքացիները դիմում են ԹԻՖԼԻՍ, учредителю коммерческих курсов С. П. Мануэляну. (Ե.) 7—12

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

յայտնում է ի տեղեկութիւն ծնողների եւ ինամակալների, որ աշխատային ընդունելութեան ըննութիւնները կը նշանակվեն սեպտեմբերի առաջին թուերում, որի մասին կը յայտարարվի լրագրիւններում առանձին:
3—5 Դերէկտորի փոխանակ՝ Ա. Եակովլեւ

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵԼԻՑ ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ:
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսել, մասնով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս: Մեկնում է Բաթումից չորեքշաբթի. 30 օգոստոսի (12 սեպտեմբերի) ժՕՐժի չորեքշաբթի, սաւապետ ԼԱՆԵՐ: Եւ չորեքշաբթի չորեքշաբթի, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին աշխ. ժամ:
Կարանային պատճառով ընկերութիւնը չէ կարող երաշխաւորել չորեքշաբթի կանոնաւոր ուղեգնացութեան համար. Բաթումից:
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտալեպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստները համար:
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն գիմն ընկերութեան գործակալներին:
ԲԱՌՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր ԳԱՐՍՈՒՆ, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեան, Սիւսի փող. Սոջախարուսովի եւ Մայսուրաձէի քարվանսարաւ: ԲԱՌՈՒ—Եղբ. Վ. եւ Ի. Մուրաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասնիկովի, № 27: ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—Վաղիկաւազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. հ. չ.) 22—20

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎՄԱՆՈՐՈՒՄ

վաճառվում են պետական դպրոցների համար կազմած հայոց կրօնի դասագրքեր՝ եզնիկ ա. ք. երգչանի աշխատասիրութեամբ:
I. Ա. ա. ջ. ի. զ. ք. յ. Կ, պատրաստականների համար. „ԱՂՈՒՔՆԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Ե ԳԼԽԱՌՈՐ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՑ ՊԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ“: Գ. տպագր. Գ ի ն ը 20 կ օ պ է կ:
II. Ե. ք. զ. ք. զ. ք. յ. Կ, Առաջին դասարանի համար. „ՀԻՆ ՈՒՍՈՒՄՈՒՄ Ս. ՊԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ“ (Նոր հրատարակութիւն): Գինը 30 կ.: (Ե. հ. չ.) 3—10